**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**գ. Բարձրավան** **7 հունիսի 2016թ.**

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 77.1-77.6-րդ հոդվածների պահանջներով, համաձայն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N1381-Ա հրամանի, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2016 թվականի փետրվարի 10-ի N13-Ա որոշումը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային խմբի կողմից (խմբի ղեկավար ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս.Ավետիսյան) ՀՀ Սյունիքի մարզի Բարձրավան համայնքի ՏԻՄ-երի լիազորությունների նկատմամբ 2016 թվականի հունիսի 7-ին իրականացվեց վարչական հսկողություն հետևյալ բնագավառներում՝

Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում, պաշտպանություն, քաղաքաշինություն, հողօգտագործում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը՝ կից հավելվածով ներկայացված հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Բարձրավանի համայնքի ղեկավարը վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել:

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Բարձրավանի համայնքի ղեկավարին:

**ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի ղեկավար՝**

**Ս.Ավետիսյան**

**ՀՀ Սյունիքի մարզի** Բարձրավանի **համայնքի ղեկավար՝**

**Օ.Ավագյան**

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Բարձրավան համայնքում
իրականացված վարչական հսկողության արդյունքների
ամփոփման վերաբերյալ
07-06-2016թ. N1 արձանագրության

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատված աշխատակազմի գործավարության կարգի առկայություն | X | X | Պահպանված չէ | Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով սահմանված պահանջը: **Աշխատակազմում տարվող գործավարությունը պատշաճ չի իրականացվում:** Համայնքի ղեկավարի կարգադրությունները, որոշումները, ավագանու որոշումները, նիստերի արձանագրությունները կատարված են թերություններով, բացակայում են իրավական ակտերի հաշվառման, ելից, մտից, համայնքային ծառայությանը վերաբերող և մի շարք այլ մատյաններ ու գործավարական | Առաջարկվել է ընդունել համապատասխան իրավական ակտ, պատշաճ մակարդակի բերել աշխատակազմում տարվող գործավարությունը | Եռամսյա ժամկետում |

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | | | փաստաթղթեր: | | |
| Համայնքի ղեկավարի ներկայացմամբ կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ որոշման առկայություն | X | X | Պահպանված չէ | Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով սահմանված պահանջը | Առաջարկվում է ընդունել համապատասխան իրավական ակտ | Եռամսյա ժամկետում |
| Համայնքի ավագանու առնվազն երկու ամիսը մեկ անգամ կայացած նիստերի արձանագրությունների առկայություն | X | X | Թերի է պահպանված | Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի երկրորդ մասով սահմանված պահանջը: | Առաջարկվել է այսուհետ ավագանու նիստերը հրավիրել օրենքով սահմանված ժամկետներում, կազմել համապատասխան արձանագրություններ | Անհապաղ |
| Համայնքի ավագանու նիստերի օրակարգի ձևավորման գործընթացում ՏԻՄ օրենքի պահանջների պահպանման առկայություն | X | Թերի են պահպանված | X | Ավագանու անդամները գրավոր չեն տեղեկացվում, գրավոր ծանուցումների մասին նյութեր չկան: Տեղեկացումը կատարվում է բանավոր կամ հեռախոսով հայտնելու միջոցով: Խախտվել են "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջները | Առաջարկվում է այսուհետ ապահովել ավագանու անդամների պատշաճ ծանուցումը | Անմիջապես |
| Համայնքի ղեկավարի անհատական ակտերի ընդունումից հետո օրենքով սահմանված երկօրյա ժամկետում ավագանու անդամներին ուղարկված լինելու, ինչպես նաև համայնքի | X | Թերի է պահպանված | X | Համայնքի ղեկավարի ոչ բոլոր անհատական ակտերի մասին է կատարվում ծանուցում: Խախտվել է "Տեղական ինքնակառավարման | Առաջարկվում է ապահովել համայնքի ղեկավարի իրավական անհատական ակտերի պատշաճ ծանուցումը ավագանու | Երկամսյա ժամկետում |

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| ավագանու նստավայրում և բոլորի համար տեսանելի վայրում համայնքի ղեկավարի անհատական ակտերի փակցված լինելու առկայություն: | | | | մասին" ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 1¹ կետի պահանջը | անդամներին | |

**Հողօգտագործման բնագավառ**

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրվում է հետևյալ նպատակներով՝<br>1) գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու,<br>2) ընդհանուր օգտագործման տարածքները (զբոսայգիներ, պուրակներ, ավտոկայանատեղեր)՝ դրանց նշանակությանը համապատասխան շահագործելու և բնակչությանը ծառայություններ մատուցելու,<br>3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ նպատակներով օգտագործելու համար, ինչպես նաև պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության պայմանագրերի գործողության ընթացքում կամ դրանց գործողության ժամկետներն ավարտվելուց հետո վարձատուի կողմից պայմանագրերի ժամկետները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության | X | X | Պահպանված չէ | Չեն պահպանվել ՀՀ Կառավարության 2010թ․ հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշման պահանջները: Առանց արոտավայրերի վարձակալության տրման պայմանագրերի համայնքի անասնապահությամբ զբաղվող բնակչությունից գանձվել են արոտավայրերի օգտագործման վարձավճարներ: | Առաջարկվում է կնքել համապատասխան պայմանագրեր | Երկու ամիս |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| սահմանած ժամկետներով երկարացվելու դեպքում: | | | | | | |

**Քաղաքաշինության բնագավառ**

**(Վարչական հսկողության ժամանակաշրջանը՝ 31.01.2014 – 07.06.2016թթ)**

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է Պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված համայնքի գլխավոր հատակագծի առկայություն | X | X | Պահպանված չէ | Համայնքը չունի գլխավոր հատակագիծ: Չի ապահովվել "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմում է համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը՝ համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը և քաղաքաշինական գոտիավորման նախագիծը և (կամ) դրանց փոփոխություններն ու նախագծման առաջադրանքները: | Առաջարկվում է համայնքի գլխավոր հատակագծի նախագծի վերաբերյալ հարցը քննարկել իրավասու մարմինների հետ և միջոցներ ձեռնարկել այն ձեռք բերելու ուղղությամբ: | Մինչև 2021 թվականի հունվարի 1-ը |
| ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված գոտիավորման նախագծի առկայություն | X | X | Պահպանված չէ | Համայնքը չունի գոտիավորման նախագիծ: Չի ապահովվել "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմում է համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը՝ համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը և քաղաքաշինական գոտիավորման նախագիծը և (կամ) դրանց փոփոխություններն ու նախագծման | Համայնքի գոտիավորման նախագծի վերաբերյալ հարցը քննարկել իրավասու մարմինների հետ և միջոցներ ձեռնարկել այն ձեռք բերելու ուղղությամբ | Մինչև 2021 թվականի հունվարի 1-ը |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | առաջադրանքները: | | |
| Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր չունեցող համայնքի զարգացման ծրագրում նախատեսված է գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծի մշակում | X | X | Պահպանված չէ: | Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը բացակայում են: Համայնքի զարգացման ծրագրում նախատեսված չէ գլխավոր հատակագծի մշակում: Չեն ապահովվել "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի պահանջները, համաձայն որի համայնքի զարգացման ծրագրում պարտադիր կարգով ներառվում են համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ: | Համաձայն "Քաղաքաշինության մասին" ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 32-րդ մասի՝ արգելվում է 2021 թվականի հունվարի 1-ից հետո, առանց սահմանված կարգով հաստատված համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, կառուցապատման նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրումը: Առաջարկվում է հարցը քննարկել իրավասու մարմինների հետ և միջոցներ ձեռնարկել անհրաժեշտ փաստաթղթերը ձեռք բերելու ուղղությամբ: | Եռամսյա ժամկետում |

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է Պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| Թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանի վարումը և գերեզմանի վկայականի տրամադրումը (ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում | X | X | Պահպանված չէ | Չի վարվում գերեզմանատեղերի գրանցման մատյանը և գերեզմանի վկայականի տրամադրում չի կատարվում: Խախտվել է ՀՀ կառավարության 2006-11-23 N1910-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 9-րդ կետի պահանջը, համաձայն որի գերեզմանատան տնօրինությունը մահվան վկայականի հիման վրա համապատասխան գրանցում է կատարում թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանում և | Առաջարկվում է ապահովել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը | Եռամսյա ժամկետում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հավելված N1, կետ 9) | | | | հուղարկավորության կազմակերպումն ստանձնողին տալիս է գերեզմանի վկայական | | |
| Գերեզմանատների մուտքի մոտ գերեզմանատան հատակագծի և գերեզմանատնից օգտվելու կանոնների տեղադրումը և գերեզմանատների տարածքի մաքրության պահպանումն ու աղբահանության կազմակերպումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 15, 16) | X | Թերի է պահպանված | X | Ապահովված է գերեզմանատան տարածքի մաքրությունը և կազմակերպվում է աղբահանությունը, սակայն գերեզմանատան մուտքի մոտ տեղադրված չեն գերեզմանատան հատակագիծը և գերեզմանատնից օգտվելու կանոնները: Խախտվել է ՀՀ կառավարության 2006-11-23 N1910-Ն որոշման N4 հավելվածի 15-րդ կետի պահանջը, համաձայն որի՝ գերեզմանատան մուտքի մոտ տեղադրվում են գերեզմանատան հատակագիծը և գերեզմանատնից օգտվելու կանոնները: | Առաջարկվում է գերեզմանատան հատակագիծը և գերեզմանատնից օգտվելու կանոնները տեղադրել մուքի մոտ | Եռամսյա ժամկետում |
| Վճարովի հիմունքներով տրամադրվող գերեզմանների հողատարածքի արժեքների սահմանում (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N7, կետ 8) | X | X | Պահպանված չէ | Համայնքը վճարովի գերեզմանի համար հողատարածք չի հատկացրել: Չեն սահմանվել նաև գերեզմանների հողատարածքի արժեքները՝ ըստ գոտիականության գործակցի: Խախտվել է ՀՀ կառավարության 2006-11-23 N1910-Ն որոշմամբ հաստատված N7 հավելվածի 8-րդ կետի պահանջը, համաձայն որի վճարովի հիմունքներով հատկացվող հողատարածքի արժեքը որոշում է համայնքի ղեկավարը՝ օրենքով սահմանված կարգով, ըստ տվյալ գոտու համար սահմանված տարածագնահատման գոտիականության գործակիցների: | Առաջարկվում է սահմանված կարգով ապահովել վճարովի հիմունքներով հատկացվող ընտանեկան գերեզմանի հատկացվող հողատարածքի արժեքի չափի որոշումը՝ ըստ տվյալ գոտու համար սահմանված տարածագնահատման գոտիականության գործակցի: | Եռամսյա ժամկետում |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՈՐՈՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Գ. Որոտան** **9 հունիսի 2016թ.**

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 77.1-77.6-րդ հոդվածների պահանջներով, համաձայն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N1381-Ա հրամանի, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2016 թվականի փետրվարի 10-ի N13-Ա որոշումը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային խմբի կողմից (խմբի ղեկավար ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս.Ավետիսյան) ՀՀ Սյունիքի մարզի Որոտան համայնքի ՏԻՄ-երի լիազորությունների նկատմամբ 2016 թվականի հունիսի 9-ին իրականացվեց վարչական հսկողություն հետևյալ բնագավառներում՝

Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում, պաշտպանություն, քաղաքաշինություն, հողօգտագործում, առևտուր և ծառայություններ:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը՝ կից հավելվածով ներկայացված հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Որոտան համայնքի ղեկավարը վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել:

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Որոտանի համայնքի ղեկավարին:

**ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի ղեկավար՝**

**Ս.Ավետիսյան**

**ՀՀ Սյունիքի մարզի Որոտան գյուղական համայնքի ղեկավար՝**

**Ս.Օհանջանյան**

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Որոտան (Գորիսի շրջ.) համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքների ամփոփման վերաբերյալ
09-06-2016թ. N1 արձանագրության

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՈՐՈՏԱՆ (ԳՈՐԻՍԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

## Առևտուր և ծառայություններ

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| Համայնքի ղեկավարը օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում հսկողություն է իրականացնում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում. | X | Թերի է պահպանված | X | Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով սահմանված պահանջը: Համայնքում գործում են առևտրի օբյեկտներ: Համաձայն համայնքի ղեկավարի հաղորդման՝ այդ օբյեկտների գործունեության նկատմամբ սահմանված կարգով իրականացվում է հսկողություն, տրված են համապատասխան թույլտվությունները, սակայն այդ օբյեկտներում կատարված հսկողությունների վերաբերյալ արձանագրություններ չեն կազմվել: | Առաջարկվում է օրենսդրությամբ սահմանված կարգով այսուհետ կազմել կատարված հսկողությունը փաստող համապատասխան փաստաթղթեր: | Անհապաղ |

**Քաղաքաշինության բնագավառ**

**(Վարչական հսկողության ժամանակաշրջանը՝ 30.11.2013 – 09.06.2016թթ)**

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է Պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված համայնքի գլխավոր հատակագծի առկայություն | X | X | Պահպանված չէ | Համայնքը չունի գլխավոր հատակագիծ: Չի ապահովվել "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմում է համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը՝ համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը և քաղաքաշինական գոտիավորման նախագիծը և (կամ) դրանց փոփոխություններն ու նախագծման առաջադրանքները: | Առաջարկվում է համայնքի գլխավոր հատակագծի նախագծի վերաբերյալ հարցը քննարկել իրավասու մարմինների հետ և միջոցներ ձեռնարկել այն ձեռք բերելու ուղղությամբ: | Մինչև 2021 թվականի հունվարի 1-ը |
| ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված գոտիավորման նախագծի առկայություն | X | X | Պահպանված չէ | Համայնքը չունի գոտիավորման նախագիծ: Չի ապահովվել "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմում է համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը՝ համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը և քաղաքաշինական գոտիավորման նախագիծը և (կամ) դրանց փոփոխություններն ու նախագծման առաջադրանքները: | Համայնքի գոտիավորման նախագծի վերաբերյալ հարցը քննարկել իրավասու մարմինների հետ և միջոցներ ձեռնարկել այն ձեռք բերելու ուղղությամբ | Մինչև 2021 թվականի հունվարի 1-ը |
| Քաղաքաշինական ծրագրային | X | X | Պահպանված չէ: | Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը բացակայում են: Համայնքի | Համաձայն "Քաղաքաշինության մասին" ՀՀ օրենքի $14^3$-րդ | Եռամսյա ժամկետում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| փաստաթղթեր չունեցող համայնքի զարգացման ծրագրում նախատեսված է գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծի մշակում | | | | զարգացման ծրագրում նախատեսված չէ գլխավոր հատակագծի մշակում: Չեն ապահովվել "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի պահանջները, համաձայն որի համայնքի զարգացման ծրագրում պարտադիր կարգով ներառվում են համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ: | հոդվածի 32-րդ մասի՝ արգելվում է 2021 թվականի հունվարի 1-ից հետո, առանց սահմանված կարգով հաստատված համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, կառուցապատման նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծայի ն առաջադրանքների տրամադրումը: Առաջարկվում է հարցը քննարկել իրավասու մարմինների հետ և միջոցներ ձեռնարկել անհրաժեշտ փաստաթղթերը ձեռք բերելու ուղղությամբ: | |

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է Պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| Թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանի վարումը և գերեզմանի վկայականի տրամադրումը (ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում հավելված N1, կետ 9) | X | X | Պահպանված չէ | Չի վարվում գերեզմանատեղերի գրանցման մատյանը և գերեզմանի վկայականի տրամադրում չի կատարվում: Խախտվել է ՀՀ կառավարության 2006-11-23 N1910-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 9-րդ կետի պահանջը, համաձայն որի գերեզմանատան տնօրինությունը մահվան վկայականի հիման վրա համապատասխան գրանցում է կատարում թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանում և հուղարկավորության կազմակերպումն ստանձնողին տալիս է գերեզմանի վկայական | Առաջարկվում է ապահովել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը | Եռամսյա ժամկետում |
| Գերեզմանատների | X | Թերի է | X | Ապահովված է գերեզմանատան տարածքի | Առաջարկվում է | Եռամսյա |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| մուտքի մոտ գերեզմանատան հատակագծի և գերեզմանատնից օգտվելու կանոնների տեղադրումը և գերեզմանատների տարածքի մաքրության պահպանումն ու աղբահանության կազմակերպումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 15, 16) | | պահպանված | | մաքրությունը և կազմակերպվում է աղբահանությունը, սակայն գերեզմանատան մուտքի մոտ տեղադրված չեն գերեզմանատան հատակագիծը և գերեզմանատնից օգտվելու կանոնները: Խախտվել է ՀՀ կառավարության 2006-11-23 N1910-Ն որոշման N4 հավելվածի 15-րդ կետի պահանջը, համաձայն որի՝ գերեզմանատան մուտքի մոտ տեղադրվում են գերեզմանատան հատակագիծը և գերեզմանատնից օգտվելու կանոնները: | գերեզմանատան հատակագիծը և գերեզմանատնից օգտվելու կանոնները տեղադրել մուքի մոտ | ժամկետում |
| Վճարովի հիմունքներով տրամադրվող գերեզմանների հողատարածքի արժեքների սահմանում (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N7, կետ 8) | X | X | Պահպանված չէ | Համայնքը վճարովի գերեզմանի համար հողատարածք չի հատկացրել: Չեն սահմանվել նաև գերեզմանների հողատարածքի արժեքները՝ ըստ գոտիականության գործակցի: Խախտվել է ՀՀ կառավարության 2006-11-23 N1910-Ն որոշմամբ հաստատված N7 հավելվածի 8-րդ կետի պահանջը, համաձայն որի վճարովի հիմունքներով հատկացվող հողատարածքի արժեքը որոշում է համայնքի ղեկավարը՝ օրենքով սահմանված կարգով, ըստ տվյալ գոտու համար սահմանված տարածագնահատման գոտիականության գործակիցների: | Առաջարկվում է սահմանված կարգով ապահովել վճարովի հիմունքներով հատկացվող ընտանեկան գերեզմանի հատկացվող հողատարածքի արժեքի չափի որոշումը՝ ըստ տվյալ գոտու համար սահմանված տարածագնահատման գոտիականության գործակցի: | Եռամսյա ժամկետում |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Գ. Վերիշեն** **13 հունիսի 2016թ.**

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 77.1-77.6-րդ հոդվածների պահանջներով, համաձայն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N1381-Ա հրամանի, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2016 թվականի փետրվարի 10-ի N13-Ա որոշումը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային խմբի կողմից (խմբի ղեկավար ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս.Ավետիսյան) ՀՀ Սյունիքի մարզի Վերիշեն համայնքի ՏԻՄ-երի լիազորությունների նկատմամբ 2016 թվականի հունիսի 13-ին իրականացվեց վարչական հսկողություն հետևյալ բնագավառներում՝

Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում, պաշտպանություն, քաղաքաշինություն, կրթություն, հողօգտագործում, ընդերքօգտագործում, առևտուր և ծառայություններ, մշակույթ և սպորտ:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը՝ կից հավելվածով ներկայացված հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Վերիշեն համայնքի ղեկավարը վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել:

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Վերիշենի համայնքի ղեկավարին:

**ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի ղեկավար՝**

**Ս.Ավետիսյան**

**ՀՀ Սյունիքի մարզի Վերիշենի համայնքի ղեկավար՝**

Ս. Օրդյան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Վերիշեն համայնքում
իրականացված վարչական հսկողության արդյունքների
ամփոփման վերաբերյալ
13-06-2016թ. N1 արձանագրության

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

## Առևտուր և ծառայություններ

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| Համայնքի ղեկավարը օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում հսկողություն է իրականացնում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում. | X | Թերի է պահպանված | X | Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով սահմանված պահանջը: Համայնքում գործում են առևտրի օբյեկտներ: Համաձայն համայնքի ղեկավարի հաղորդման՝ այդ օբյեկտների գործունեության նկատմամբ սահմանված կարգով իրականացվում է հսկողություն, տրված են համապատասխան թույլտվությունները, սակայն այդ օբյեկտներում կատարված հսկողությունների վերաբերյալ արձանագրություններ չեն կազմվել: | Առաջարկվում է օրենսդրությամբ սահմանված կարգով այսուհետ կազմել կատարված հսկողությունը փաստող համապատասխան փաստաթղթեր: | Անհապաղ |

Կրթության բնագավառ

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ իսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերցման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Հաշվառում-Տվյալ տարածքում բնակության վայրի մասին տեղեկանքների և բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տվյալների հավաքագրում /ծննդյան վկայական, անձնագիր/: | X | Թերի է պահպանված | X | Կատարվել է տվյալ տարածքում բնակության վայրի մասին տեղեկանքների հավաքագրումը, առկա են նախակրթարան հաճախող երեխաների ծննդյան վկայականները, սակայն բացակայում են բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանքները: Բացակայում են ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2011թ. հուլիսի 28-ի "Նախադպրոցական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա «Նախադպրոցական ուսումնական հաստատության երեխաների շարժի մատյանի ձևաթուղթը, գործածության և վարման կարգը» հաստատելու մասին" N870-Ն հրամանով հաստատված նախադպրոցական ուսումնական հաստատության երեխաների շարժի մատյանը, ինչպես նաև երեխաների | Առաջարկվում է ուսումնական հաստատության երեխաների շարժի մատյանում գրանցել հաստատություն ընդունված և ազատված, տարիքային խմբից խումբ փոխադրված երեխաների շարժը: Համապատասխան հրամանագրքում սահմանված կարգով գրանցել երեխաների ընդունելության, ազատման, խմբից խումբ տեղափոխման հրամանները: Համայնքային բյուջեն ձևավորելու ժամանակ պահպանել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007-01-26 N29-Ն | Մինչև 2016թ. սեպտեմբերի 10-ը |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | հրամանագրման հրամանագիրքը: Հաստիքացուցակը և տարիֆիկացիոն մատյանը բացակայում են, չեն կիրառվել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007թ. հունվարի 26-ի "ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին" N29-Ն հրամանով հաստատված N1 հավելվածի պահանջները: | հրամանով հաստատված N1 հավելվածի պահանջները, մասնավորապես նաև նույն հավելվածի 25-րդ կետի պահանջը: Հակողություն սահմանել "Նախադպրոցական կրթության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի "գ" կետով սահմանված ավագ նախադպրոցական տարիքից բարձր՝ 6 տարին լրացած դպրոցահասակ երեխաների հաճախումը նախակրթարաններ բացառելու ուղղությամբ: | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ընդգրկում-Հաստատության և ծնողի միջև կնքվող պայմանագրի հիման վրա հրամանագրված երեխաների ֆինանսավորում: | X | Թերի է պահպանված | X | Չեն կիրառվել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007-03-23 N180-Ա/Ք հրամանի N1 հավելվածով հաստատված ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատության և հաստատություն հաճախող երեխայի ծնողների (նրանց օրինակելի ներկայացուցիչների) միջև կնքվող օրինակելի պայմանագրի վերաբերյալ մեթոդական ցուցումների պահանջները: | Առաջարկվում է ապահովել նախադպրոցական ուսումնական հաստատության և հաստատություն հաճախող երեխայի ծնողների (նրանց օրինակելի ներկայացուցիչների) միջև պայմանագրի կնքումը՝ համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007-03-23 N180-Ա/Ք հրամանով սահմանված ցուցումների: | Մինչև 2016թ. սեպտեմբերի 10-ը |
| Ծրագրերի մշակում և իրականացում-համայնքի իրավիճակի վերլուծություն, կարիքների ճշգրտում, համայնքի համախմբում, ծրագրի առաջարկի մշակում և ներկայացում, ծրագրի առաջարկով նախատեսված ներդրումների ապահովում: | X | Թերի է պահպանված | X | Համայնքի ղեկավարը և ավագանին որոշակի մասնակցություն են բերում նախադպրոցական կրթության ծրագրերին, սակայն տվյալներ չկան նրանց կողմից նախադպրոցական ուսումնական հաստատությունում փորձարարական և նորարարական գործունեության իրականացման վերաբերյալ: Խախտվել է «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետի պահանջը, համաձայն որի՝ տեղական ինքնակառավարման մարմինները կազմակերպում են նախադպրոցական ուսումնական | Առաջարկվում է ապահովել համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ավելի ընդգրկուն մասնակցությունը նախադպրոցական կրթության ծրագրերի մշակմանը և իրականացմանը, ինչպես նաև կազմակերպել նախադպրոցական ուսումնական հաստատությունում փորձարարական ու նորարարական գործունեության իրականացումը: | Անհապաղ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | հաստատություններում փորձարարական և նորարարական գործունեության իրականացումը: | | |
